

Իմաստություն Խոսքը





Քանի որ մեր ֆիզիկական վիճակն ազդում է մեր հոգևոր վիճակի վրա, մեր Երկնային Հայրը մեզ պատվիրաններ է տվել, որոնք նախատեսված են բարելավելու մեր ֆիզիկական և հոգևոր առողջությունը: Որպես Հիսուս Զրիստոսի ավետարանի Վերականգնման մաս Աստված Մարգարե Չոզեֆ Սմիթին հայտնել է, թե ինչպես մենք կարող ենք հոգ տանել մեր մարմինների համար, որպեսզի Տիրոջ Հոգին մեզ հետ լինի: Այս հայտնությունը հայտնի է որպես Իմաստության Խոսք: Այս պատվիրանին հնազանդվելը նախապայման է Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մկրտվելու համար: Մեծ օրհնություններ են խոստացվում նրանց, ովքեր ցույց են տալիս իրենց հավատը այս պատվիրանին հնազանդվելով:

Ի՞նչ է Իմաստության Խոսքը:

Տերը հայտնել է Իմաստության Խոսքը Մարգարե Չոզեֆ Սմիթին: Այդ հայտնության մեջ մենք նախազգուշացվում ենք զերծ մնալ ալկոհոլից, ծխախոտից և տաք ըմպելիքներից, այսինքն՝ թեյից և սուրճից: Ավելի ուշ մարգարեները սովորեցրել են, որ մենք չպետք է

Ձեր հոգևոր և ֆիզիկական բարեկեցության համար, Տերը խնդրում է ձեզ զերծ մնալ.

- Ալկոհոլից
- Ծխախոտից
- Թեյից և սուրճից
- Անօրինական բմբանյութերից
- Վնասակար կամ հակում առաջացնող այլ նյութերից

օգտագործենք անօրինական թմրադեղեր պարունակող կամ վնասակար և հակում առաջացնող նյութեր: Իմաստության Խոսքը սովորեցնում է նաև չափավոր քանակով միս օգտագործել, ուտել հատիկեղեն, մրգեր և բանջարեղեն:

Իմաստության Խոսքի օրհնությունները

Իմաստության Խոսքին հետևելը կբարելավի ձեր ֆիզիկական և հոգևոր քարօրությունը: Թեպետ հնարավոր է դուք առողջական խնդիրներ ունենաք, այս պատվիրանին հնազանդվելը կօգնի ձեզ ունենալ ավելի առողջ մարմին և ուղեղ:

Նոր Կտակարանում Պողոս Առաքյալը մարմինը նկարագրում է որպես տաճար. «Չգիտե՞ք որ դուք Աստուծոյ տաճար եք և Աստուծոյ Հոգին բնակուած է ձեզանում: Եթե մեկն Աստուծոյ տաճարն ապականե, նորան էլ Աստուած կապականե. որովհետև Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս Գ.16–17):

Երբ մենք պահում ենք Իմաստության Խոսքը, մեր էության նուրբ, զգայուն, հոգևոր մասը պատրաստ է լինում ստանալու Աստծո առաջնորդությունը: Սովորեք լսել հոգևոր հուշումներին և զգացումներին: Դուք կնախագգուշացվեք վտանգներից և կառաջնորդվեք Սուրբ Հոգու կողմից: Ձեր իմաստությունն ու գիտելիքը կավելանա: Դուք մտքի ավելի մեծ խաղաղություն կունենաք, ձեր ինքնատիրապետումը կամրանա, և դուք ձեռք կբերեք վստահություն կյանքի և ապագայի հանդեպ:





Իմաստության Խոսքը

Այս հայտնությունը, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացել է 1833 թվականին, ուղղություն է մեր Երկնային Հորից իր գավակներին այսօր: Ստորև տրվում են հատվածներ այդ հայտնությունից, որը գտնվում է Վարդապետություն և Ուխտերի 89-րդ բաժնում.

«Իմաստության Խոսք . . . եկեղեցու և նաև Սիոնի սրբերի օգտի համար . . .

Տրված որպես խոստումով սկզբունք, թույլերի և ամենաթույլերի կարողությանը հարմարեցված, բոլոր սրբերի համար

Ահա, ճշմարիտ, այսպես է Տերն ասում ձեզ. Չարիքների ու դավադրությունների հետևանքով, որոնք կան և վերջին օրերին կլինեն դավադիր մարդկանց սրտերում, ես զգուշացրել եմ ձեզ, և նախազգուշացնում եմ, տալով այս իմաստության խոսքը հայտնությանը,-

Որ, որքան որ ձեր մեջ որևէ մեկը խանում է գինի կամ թունդ խմիչք, ահա դա լավ չէ. . .

Եվ բացի այդ, ծխախոտը մարմնի համար չէ, ոչ էլ որովայնի համար, և այն օգտակար չէ մարդու համար . . .

Եվ բացի այդ տաք ըմպելիքները մարմնի կամ որովայնի համար չեն:

. . . Բոլոր առողջարար խոտաբույսերն Աստված սահմանել է մարդու կազմության, բնության և օգտագործման համար . . .

Այո, միսը նույնպես, կենդանիների և երկնքի թռչունների, ես՝ Տերս, սահմանել եմ, որ մարդ օգտագործի գոհարանությամբ. սակայն դրանք պետք է օգտագործվեն խնայողաբար . . .

Բոլոր հատիկներն օգտակար են մարդու սննդի համար. ինչպես նաև որթի պտուղը. այն, ինչ պտուղ է տալիս՝ թե հողի մեջ, թե հողի վրա . . .

Եվ բոլոր սրբերը, ուլքեր հիշում են, որ պահեն և կատարեն այս ասածները . . . կունենան առողջություն իրենց պորտում և ծուծ՝ իրենց ոսկորներում.

Եվ կգտնեն իմաստություն և գիտության մեծ զանձեր, նույնիսկ թաքնված զանձեր.

Եվ կվազեն ու չեն հոգնի, և կքայլեն ու չեն նվաղի:

Եվ ես, Տերս, տալիս եմ նրանց խոստում, որ կործանիչ հրեշտակը կանցնի նրանց կողքով, ինչպես Իսրայելի զավակների, և չի սպանի նրանց: Ամեն» (Վարդապետություն և Ուխտեր 89.1, 3–5, 8–10, 12, 16, 18–21):





Հրաժարվել վնասակար նյութերից

Եթե դուք օգտագործում եք ծխախոտ, ալկոհոլ, սուրճ, թեյ, թմրանյութեր կամ վնասակար ու հակում առաջացնող այլ նյութեր, կանգ առեք: Դուք կօրհնվեք, ունենալով ավելի առողջ մարմին և հոգի: Որոշ մարդիկ սովորություններ կամ հակումներ են զարգացրել, որոնց հետևանքով դժվար է դառնում հրաժարվել այդ նյութերը օգտագործելուց: Եթե դուք դժվարանում եք հրաժարվել այդ սովորությունն առաջացնող նյութերից, աղոթքով խնդրեք Աստծուն օգնել ձեզ փոխարինել վնասակար մտքերը, գործերը և հրապարանքները վեհացնող, առողջարար ազդեցությամբ: Եթե դուք ձեր կյանքը լցնեք այն ամենով, ինչը դրական և վեհացնող է, ապա վնասակար և քացասական բաների համար գրեթե տեղ չի մնա: Հետևյալ խորհուրդները կօգնեն ձեզ.

- Վճռեք թողնել վնասակար սովորությունը: Աղոթեք և ծոմ պահեք վստահությամբ, որ Տերը կօգնի ձեզ հաղթահարել ձեր հակումը:
- Ուսումնասիրեք սուրբ գրությունները: Մտապահեք սուրբ գրությունների հատվածներ և հաճախ մեջքերեք դրանք: Դրանք ձեզ հոգևոր ուժ կպարզեն:
- Քահանայության օրհնություն խնդրեք, որը կօգնի ձեզ դիմակայել գայթակղությանը:

Շարունակեք փորձել:

Եթե ձեր կյանքում կիրառեք

Քավոթյունը, Տերը կօգնի

ձեզ, եթե անգամ առաջըն-

թացը դանդաղ է թվում:

- Ազատվեք վնասակար նյութերից և այլսս ձեռք մի բերեք դրանք:
- Գրի առեք ժամանակը, վայրերը և իրավիճակները, որտեղ և որոնցում դուք գայթակղվում եք խախտել Իմաստության Խոսքը: Խոսեք ձեր ծնողների, ամուսնու, միսիոներների և այլ վստահելի ընկերների հետ այն մասին, թե ինչպես կարող եք խուսափել ձեր գրած ցանկի կետերից: Օրինակ, գտեք նոր զբաղմունքներ կամ հետաքրքրություններ, որոնք ձեզ չեն գայթակղի: Ունկնդրեք վեհացնող երաժշտություն, ծառայեք ուրիշներին, կարդացեք լավ գրքեր կամ մարզվեք, երբ գայթակղվում եք:
- Մասնակցեք Եկեղեցու միջոցառումներին: Դուք ավելի կմոտենաք Տիրոջը և ավելի մեծ ուժ կունենաք վնասակար նյութեր օգտագործելու ձեր ցանկությունը հաղթահարելու համար:
- Հաճախեք համապատասխան աջակցման խմբերի հանդիպումներին կամ մասնագիտական օգնություն ստացեք:
- Երբեք մի մոռացեք, որ Տերը կօգնի ձեզ, եթե դուք ապավինեք Նրան: Այդ նյութերից հրաժարվելը շատ դժվար կարող է լինել, և որոշ մարդիկ կարող են կրկին վերադառնալ հին սովորություններին, կրկին ու կրկին, մինչև որ լիովին թողնեն դրանք: Շարունակեք փորձել և երբեք հույսը մի կորցրեք:

Լինելով հնազանդ և ազնիվ, և օգնության համար դիմելով Աստծուն և ուրիշներին, դուք կարող եք հաղթահարել ձեր հակումները Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Ապրելով Իմաստության Խոսքով, դուք կստանաք Տիրոջ խոստացված օրհնությունները:



Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերը և սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելի շատ իմանալ այս գրքույկի սկզբունքների մասին: Սուրբ գրությունների տողատակի ծանոթագրությունները և խաչաձև հղումները ձեզ կողողեն այս սկզբունքներին վերաբերող լրացուցիչ հատվածների և աղբյուրների:

Ինչո՞ւ ես պետք է զգույշ լինեմ, թե ինչ նյութեր եմ ընդունում իմ օրգանիզմ:

Առակաց Ի.1 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Ա Կորնթացիս Գ.16–17 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ա Կորնթացիս Զ.19–20 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Վարդապետություն և Ուխտեր 89 (Միսիոներները կամ Եկեղեցու որևէ անդամ կարող են օգնել ձեզ ձեռք բերել Վարդապետություն և Ուխտերի մեկ օրինակ: Դուք կարող եք նաև այցելել ինտերնետի www.mormon.org կայք՝ այն գտնելու համար:)

«Իմաստության Խոսք», *Հավատին հավատարիմ*
(Միսիոներները կամ Եկեղեցու որևէ անդամ կարող են օգնել ձեզ ձեռք բերել այս գրքի օրինակը: Դուք կարող եք նաև այցելել ինտերնետի www.mormon.org կայք՝ այն գտնելու համար:)

Ի՞նչ հոգևոր և ֆիզիկական օրհնություններ կարող են գալ առողջության համար տրված Աստծո պատվիրաններին հետևելու արդյունքում:

Դանիել Ա.3–20 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Ինչպե՞ս Տերը կամրացնի ինձ, երբ ես գայթակղվեմ:

Մոսիա 5.2 (Մորմոնի Գիրք, էջ 160)

Մոսիա 7.33 (Մորմոնի Գիրք, էջ 166)

Ալմա 13.27–29 (Մորմոնի Գիրք, էջ 259)

Եթեր 12.27 (Մորմոնի Գիրք, էջ 570)



Ի՞նչ ես պետք է անեմ:

- Շարունակեք կարդալ Մորմոնի Գիրքը:
Առաջարկվող ընթերցանություն. _____
- Ապրեք Իմաստության Խոսքով: Աղոթեք օգնության համար, որպեսզի պահեք պատվիրանները: Նպատակներ դրեք ձեր ֆիզիկական և հոգևոր առողջությունը բարելավելու համար, խոսափելով վնասակար նյութերից և կենտրոնանալով ճիշտ սննդի և առողջ այլ սովորությունների վրա:
- Այս կիրակի այցելեք եկեղեցի:
- Շարունակեք պատրաստվել մկրտությանը:
Մկրտության ամսաթիվ. _____
- Այցելեք www.mormon.org ինտերնետային կայք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու մասին ավելի շատ բան իմանալու համար:
- Շարունակեք հանդիպումները միսիոներների հետ, որպեսզի ավելի շատ սովորեք այն մասին, թե ինչպես կարող եմ Աստծո պատվիրաններն օրհնել ձեր կյանքը:

Հաջորդ հանդիպում. _____

Միսիոներների անունները և հեռախոսի համարները.

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՄՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարներ

Սոջնի կազմ, 5, 6, 9, 10, 14 Marina Lukach. © Marina Lukach
Էջ 2, հատված Brother Joseph-ից, Դեյվիդ Լինդսլեյի © David Lindsley

© 2007 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in the Germany.
Անգլերենի հաստատումը. 2/06: Թարգմանության հաստատումը. 2/06: The Word of Wisdom-ի
թարգմանությունը: Armenian

ARMENIAN



4 02011 37201 3
01137201